

նակէ երկու կամ երեք տարի միայն: Մի եւ նոյն ատեններն Եւտիգուլէի ազգ. հիւանդանոցի չոգաբարձութիւնն ալ կը յանձնէ իրեն նոյն շատատու թեան բժշկապետութիւնը¹, որ ցայ՝ վայր օտարազգի բժիշկներու ձեռքը մնացած էր², եւ այս՝ հիւանդանոցին վերաշինութենէն, այսինքն՝ 1833էն ի վեր, մինչ հին հիւանդանոցին բժիշկներն եղած էին հայ բժիշկներ, զորս ապացուցանել նկատած եմ ուրիշ առթիւ³:

Յակոբ Յովհաննէսեան ուրեմն, Ս. փրօկչեան-Պէղծեան հիւանդանոցին առաջին հայ բժիշկը կ'ըլլայ, եւ որչափ օգտակար կ'ըլլայ մեր արեւակից խեղճ պանդուխտ հիւանդներուն, ազատելով զանոնք եւ այլազգի շահամուլ շաղ-փաղիներու անգթութենէն:

Տըթ. Յակոբ, ազնիւ բնաւորութեան տէր, համեստ, անշահատենդիր, գթասիրտ, քաղցրաբարոյ եւ քաղցրալեզու, ինչպէս կը պատմեն այսօր, ժամանակաւ զինքը ճանչցողները, եւ այս չքնաղ յատկութիւններուն հետ, ունենալով նաեւ ջերմ ազգասիրութիւն, մեծ եռանդով կը փարի ազգ. հիւանդանոցին, ուր քիչ ատենուան մէջ հեղինակ կ'ըլլայ կարեւոր բարեկարգութեանց եւ բացայայտ կը ցուցնէ այն մեծ օգուտները՝ զորս անտերունչ տառապեալները կ'ունենային, դարմանուելով իրենց լեզուն իմացող, իրենց ցաւակրութիւններն հասկըցող հայ բժշկէ մը:

Սակայն՝ Տըթ. Յովհաննէսեանի պաշտօնավարութիւնն ազգ. հիւանդանոցին մէջ երկար չի տեսեր, վասն զի այն ատենի Բրիտանացի կամ հոգաբարձու աղաները չեն սիրեր զինքը, խեթիւ կը նային հայ բժշկապետին գիտնական գործառնութեանց, շուայլ, մտտող, տգէտ, անկարող կը բամբասեն զինքը, կ'արհամարհեն, կը թշնամանեն զայն յայտնապէս, այնչափ որ Տըթ. Յակոբ խորապէս զգածուած եւ վշտահար՝ կը ստիպի հրաժարիլ, հեռանալ իւր ազգին անէն, զոր ջերմ սիրով գրկած էր եւ գրեթէ անձնանուիրաբար վարել սկսած էր:

Ս. փրօկչեան հիւանդանոցին առաջին հայ բժշկապետին դէմ եղած այս անիրաւ վարմունքը, զոր Տըթ. Ստեփան փաշա կը պատմէր ինձ ցաւով, ոչ նուազ մեծ կեղտ մըն է այն ատենի չոգաբարձութեան, որուն նմանողներ ալ

պակաս եղած չեն միշտ դժբախտաբար յաջորդ չոգաբարձութիւններուն մէջ, եւ այն ատենէն ի վեր այն զուտ ազգային դարմանատան մէջ քանի քանի անգամներ վատ ապերախութեամբ վարձատրուած չեն հայ բժիշկներու յորդաբուղի քրտինքը, հոն Յովսէփ Պէյտաններ, Սերվիլէններ, Բարունակ պէյեր, Քեաթիպեաններ, հիւանդաց սնարն անբուն հսկող անձնանուէր հայ բժիշկներ գնահատուեցան արդեօք. միթէ տգէտ գլուխներէ չանպատուեցան անոնք, անբարոյական անարգ անձերէ սոսկալի զրկանքներ չկրեցին, չանարգուեցան միթէ հոգաբարձու անունը կրող հոգեյաւելու քարտիրոս հրէշներէ, հոն՝ միթէ աղքատ հիւանդներու իրաւունքը իւրացնող միթէ սուտ ազգասէրներու զազիր քմահաճոյքին խաղալիք չեղան բժշկութիւնը, որ դեռ վերջերս միայն կրցաւ իւր պատիւը վերստին ստանալ, շնորհիւ Կիւլպէնկեաններու, Յակոբեաններու, Կիւմիշկերտանեաններու պէս ճշմարիտ ազգասէրներէ բաղկացեալ չոգաբարձութեան:

Տըթ. Յովհաննէսեան ազգ. հիւանդանոցը կը թողու ի սպառ 1850ին վերջերը¹ կամ 1851ին սկիզբները, որ ատեն կը յաջորդէ իրեն Տըթ. Յովսէփ Պէյրան, որ դեռ նոր կու գար Փարիզէն²:

Ազգ. հիւանդանոցին բժշկապետական պաշտօնը թողուլով, տարի մը վերջն ալ կը հրաժարի Կայս. Բժշկական վարժարանին մէջ ունեցած դասախօսութիւններէն³, որովհետեւ դեր-գնդապետի աստիճանին բարձրանալով, եւ ալ ուէյ տիտղոսն ալ կրելով, կը խրկուի Շուսմա, հոն տեղի Կայս. բանակի հիւանդանոցին բժշկապետութիւնն ընելու:

Շուսմայի մէջ՝ շատ չ'անցնիր՝ Տըթ. Յակոբ կը ծանօթանայ պուլկարահայ ընտանիքներու, որոնցմէ ամէնէն հարուստին եւ երեւելոյն ալ մէկ աղջիկը բախտ կ'ունենայ իրեն գրաւելու եւ հետն ամուսնանալու՝ զէպի 1854ին:

Այս՝ սիրով, ուրախութեամբ եւ շքեղ փարթամութեամբ կատարուած ամուսնութիւնը

1 Տես Պարթ. Ս. Փրիլէ Հիւանդանոցին Հայոց է Կ. Պրիլէ-Բիւզանդ. Բէշեանի, 1888, էջ 50:
 2 Տես անդ.
 3 Հանդէս Ա՛օրէոյ օգոստ. 1893, էջ 251: Յն. ր. 1896, էջ 6. եւ Հոկտեմբ.—Նոյեմբ. 1898, էջ 320—321:

1 Պարթ. Ս. Փրիլէ Հիւանդանոցին Բ. Բէշեան, 1888 էջ 50:
 2 Հանդէս Ա՛օրէոյ. Թիւ Մարտի 1895, էջ 90:
 3 Զգիտեմ թէ Տըթ. Յակոբ Յովհաննէսեանէն անմիջապէս վերջն ո՞վ դասատու եղած է բժշկական նկարչութեան, միայն թէ՛ բաւական տարիներ վերջը Կայս. Բժշկական վարժարանին այն դասը յանձնուած է դարձեալ Հայոց մը՝ անուանի նկարիչ Սաղայեան Աբրահամ Էֆէն-տի, որ մինչև 1875 դասախօսած է: Սաղայեանի մահուանէն վերջն ալ նոյն կարեւոր դասը բնաւ չէ անսկսուած:
 Տ. Վ. Յ. Թ.